# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2.1

## *ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԽԾՁԲ-26/02*

## *ծածկագրով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ծեռքբերման գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի*

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ

03 հունիսի 2026թ.
ժամը 17:00

ք. Ստեփանավան Ս.Սարգսյան փ/շ/ 1

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ՝***

Ա.Կիրակոսյան - հանձնաժողովի նախագահ

***Հանձնաժողովի անդամներ՝***

Ա.Բարխուդարյան- հանձնաժողովի անդամ/գնահատող/
Ն.Գասպարյան - հանձնաժողովի անդամ/ գնահատող/
Ա.Մարտիրոսյան - հանձնաժողովի անդամ/բացող/
Ա.Խալաթյան - հանձնաժողովի անդամ/ բացող /

***Հանձնաժողովի քարտուղար՝***

Օ. Մանվելյան - հանձնաժողովի քարտուղար

### *1. ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԽԾՁԲ-26/02 ծածկագրով գնանշման հարցման հայտեր ներկայացրած մասնակիցների մասին / Ա.Կիրակոսյան /*

1.1. Ընդունել ի գիտություն, որ.
Հրավերի պահանջներին համապատասխան սահմանված ժամկետում armeps.am համակարգի միջոցով հայտ էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| | Մասնակցի անվանումը | ՀՎՀՀ | Կոնտակտային տվյալներ |
|---|---|---|---|
| 1 | «Ալենշին» ՍՊԸ | 06962402 | Գործունեության հասցե – ՀՀ, ք.Վանաձոր, Թումանյան 9Ա, 6<br>Հեռախոսահամար – +374 99 55 23 55<br>Էլեկտրոնային փոստի հասցե – begartur1975@mail.ru |
| 2 | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | 01362589 | Գործունեության հասցե – Երևան Կենտրոն Մ.Մաշտոցի պող/Շ/60 գրասենյակ 6<br>Հեռախոսահամար – +374 93 741188<br>Էլեկտրոնային փոստի հասցե – ascontrol.llc@gmail.com |
| 3 | «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ | 06938006 | Գործունեության հասցե – ք.Վանաձոր, Մաշտոցի փ. 8/1<br>Հեռախոսահամար – 093-77-66-95<br>Էլեկտրոնային փոստի հասցե – koshtoyansamvel@gmail.com |
| 4 | «ՏԵԽ ԴՐԱՖՏ» ՍՊԸ | 00250424 | Գործունեության հասցե – ք.Վանաձոր, Խորենացու փող. 7/13<br>Հեռախոսահամար – 077 76 10 25<br>Էլեկտրոնային փոստի հասցե – texdraft@mail.ru |
| 5 | «ԲԵՍՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | 05550458 | Գործունեության հասցե – ՀՀ ՇՄ, ք.Գյումրի, Արագած փ., շ 1, բն.16<br>Հեռախոսահամար – 098787032<br>Էլեկտրոնային փոստի հասցե – bestproject.llc@mail.ru |
| 6 | «Ռիջիդ » ՍՊԸ | 08622912 | Գործունեության հասցե – Գեղարքունիքի մարզ գ.Գեղամավան 2-րդ փ. 3-րդ նրբ. 25տ.<br>Հեռախոսահամար – 093355787<br>Էլեկտրոնային փոստի հասցե – rigidalgroup@gmail.com |

Որևէ հիմնավորում՝ կապված հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հետ, մասնակիցների կողմից չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

*2. Գնանշման հարցման մասնակիցների ներկայացրած հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին*
*/ Ա.Կիրակոսյան /*

2.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ.

- «Ռիջիդ » ՍՊԸ -ի ներկայացրած հայտում 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով նմանատիպ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է գնման գնի երեսուն տոկոսից:

2.2. Մնացած մասնակիցների ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

*3. Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների մասին*
*/ Ա.Կիրակոսյան /*

3.1. Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են armeps.am համակարգի միջոցով:
*Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկներն են՝*

| Չափաբաժնի անվանում | Մասնակից | Նախահաշվային գին | Գինը առանց ԱԱՀ-ի / ՀՀ դրամ/ | Առաջարկած ընդհանուր գինը/ ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1. Քաղաքային ժամանակակից շուկայի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | 1 136 856 | 852000 | 852000 |
| | «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ | | 592000 | 592000 |
| | «ԲԵՍՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | | 950000 | 950000 |
| | «Ռիջիդ » ՍՊԸ | | 580000 | 580000 |
| 2.ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի բազմաբնակարան շենքերի բակերի, թիվ 1, 3, 4 մանկապարտեզների բակերի, համայնքի և վարչական տարածքների պուրակների բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | 10 150 572 | 7000000 | 7000000 |
| | «ԲԵՍՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | | 6500000 | 6500000 |
| | «Ռիջիդ » ՍՊԸ | | 4880000 | 4880000 |
| 3. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Չայկովսկի փողոցի և Մյասնիկյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | «Ալեն2ին» ՍՊԸ | 3 200 592 | 2400000 | 2400000 |
| | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | | 2400000 | 2400000 |
| | «ԲԵՍՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | | 1400000 | 1400000 |
| | «Ռիջիդ » ՍՊԸ | | 1480000 | 1480000 |
| 4. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Մայակովսկի փողոցի, Մայակովսկի 1-ին, 2-րդ փակուղիների, Կոմիտաս փողոցի, Մյասնիկյան փողոցի 1-ին, 2-րդ փակուղիների, Ավետիսյան փողոցի հիմնանորոգում տուֆե սալարկումով և 3-րդ, 4-րդ միկրոշրջանների փողոցների մայթերի կառուցում տուֆե սալարկումով աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | 11 998 284 | 7000000 | 7000000 |
| | «ՏԵԽ ԴՐԱՖՏ» ՍՊԸ | | 9500000 | 9500000 |
| | «ԲԵՍՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | | 7900000 | 7900000 |
| | «Ռիջիդ » ՍՊԸ | | 4880000 | 4880000 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:***

***4. Հանձնաժողովի հերթական նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին***
***/ Ա.Կիրակոսյան /***

4.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման » կարգի 41-րդ կետի պահանջները, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, մասնակցին՝ «Ռիջիդ » ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովի հերթական նիստը տեղի կունենա 05.06.2026թ.-ին ժամը 09:00-ին, ք. Ստեփանավան Սոս Սարգսյան փ/2/ 1 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:***

Հանձնաժողովի նախագահ ՝ ____________________ Ա.Կիրակոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________________ Ա.Բարխուդարյան

____________________ Ն.Գասպարյան

____________________ Ա.Մարտիրոսյան

____________________ Ա.Խալաթյան

Հանձնաժողովի քարտուղար ՝ ____________________ Օ. Մանվելյան